

ՆԱԳԱՍԱԿԻ ԳԼԽԱՒՈՐ ՓՈՂՈՑ

Մի վայրկեան ամենքան շուրջդ խաղալիքի տպաւորութիւն է անում, ամեն-ինչ այնքան մանր է ու փոքրադիր: Փողոցը այնպէս նեղ է, որ եթէ պատահմամբ եւրոպական մի կառք ներս մտնէր, կը խցէր ամբողջ փողոցի շարժումը. էլ ի՛նչ ասել կուզի, որ շուռ տալ բացարձակապէս կարող չէր լինի: Ինչքան էլ շատ փոքր լինէին մեր կառքերը, նորից ստիպւած էինք իրար ետեւից գնալու, ոտքով գնացողների ճամփան չըփակելու համար: Սակայն փողոցը ոչ մութ էր թւում, ոչ էլ մռայլ շնորհիւ շէնքերի ցածութեանը: Տները բոլորն էլ անխտիր երկյարկանի են, կղմինդրէ միօրինակ թեք